Հուղասխեւի աւանը Կոլբակի ափերին, Պալխար աւանը Հինդկարի առուի եւ Պալխարի ափերին մի տարածուած ընդարձակ աւան է — մեծ գեղ է նման Թաւրեզին, որ 15 կիլոմետր տարածուած է երկար. եւ լայնութեամբ, կամ Բուխարային — հին նահապետական աւաններին: Եթէ լաւ ուսումնասիրուի եւ քննուի, պիտի ապացուցուի, որ Բահլի արուարձաններն են Հուղասխեւի, Ութավի, Ծատլիցկարա եւ նոյն իսկ Պալխար աւանները, որոնք մի տոհմի, մի մեծ ցեղի զանազան ընտանիքների բնակարաններն են կազմում: Այս կալուածքը գտնւում է հիւսիսային 40°—75 — 41° լայնութեան եւ 59°, 25—59—50° երկարութեան:

Կասկած չկայ որ Բահլն ու Պահլը միեւնոյն արմատական անունն է: Պալխար անուան արմատը Պահլ կամ Պալհ լինելը յայտնի է: Որ Բահլում ապրել են նախնական փահլեւանները, երկայնաբազուկ տիտանները, բարձրահասակ հսկաները, քաջ ռազմիկները, այս բոլորին վկայ եւ ապացոյց են այն բոլոր շինուածքները, որոնք աչքաղարեան շրջանից սկսեալ կերտուել են Բահլում, շրջակայքում եւ այսօր ապշեցնում են այդ մարդահասակ ժայռերով կերտուած քները բնիկներին եւ այցելուներին: Որ այդ տիտան Բահլաւանների ծննդավայրում չարունակաբար ապրել են այդ հսկաները, դրան ապացոյց են աչքաղարեան ամրոցներից